ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
23 հոկտեմբերի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 58 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ Սարգիս Մադաթյանը և Սուրեն Գրիգորյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արփենիկ Մուրադյանը և Արման Լազրյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետ Ալիկ Վարդազարյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, սպորտի և երիտասարդության վարչության պետ Արսեն Մակվեցյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ Արմեն Առաքելյանը, առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը, մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սևակ Մելքոնյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2025 թվականի նոյեմբերի 18-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց օրակարգի չզեկուցվող 15-րդ՝ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկության դրվեց օրակարգի չզեկուցվող 15-րդ՝ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան դարձնելու առաջարկը:

Կողմ՝ 28, դեմ՝ 29, ձեռնպահ՝ 1

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ օրակարգի նախագծի չզեկուցվող 4-րդ՝ ««Մալաթիա-Սեբաստիա» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2024 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին» հարցի վերաբերյալ գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

«Մալաթիա-Սեբաստիա» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2024 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 23-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 27 հարց, որից՝ 2-21-րդ հարցերը չզեկուցվող են:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 23-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
3. Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին: (Չզեկուցվող)

4. «Մալաթիա-Սեբաստիա» առողջության կենտրոն» փակ բաժնետիրա-կան ընկերության կողմից 2024 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին: (Զեկուցվող)

5. Վարչական իրավախախտում կատարած անձանց փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին: (Զեկուցվող)

6. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 266-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

7. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

8. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

9. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու մասին: (Զեկուցվող)

10. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

11. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: (Զեկուցվող)

12. Որպես նվիրաբերություն հողամաս տրամադրելու մասին: (Զեկուցվող)

13. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 3-րդ նրբանցք հ.17/2 հասցեում լոգիստիկ պահեստային կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

14. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց հ.10/18 հասցեում պահեստային շինությունների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

15. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

16. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսակովի պողոտա հ.31 հասցեում առևտրի կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

17. Հակոբ Հակոբյանի հեղինակած «Կնոջ ֆիգուր» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)

18. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ամիրյան փողոցի մայթերի վերանորոգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)

19. Երևան քաղաքում Ալեքսանդր Աճեմյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

20. Երևան քաղաքում Արամ Սաթունցի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)

21. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին: (Չզեկուցվող)

22. Երևան քաղաքում Քըրք Քըրքորյանի անվամբ փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)

23. Ավետիք (Ավիկ) Վիգենի Իսահակյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)

24. Մարկ Վլադիմիրի Գրիգորյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)

25. Տարոն Արտավազդի Մուրադյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին: (Զեկուցվող)

26. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

27. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 17, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 21-րդ հարցերը:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

3. Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական ծառայություն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, «Գնումների

մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված բաց մրցույթի կիրառմամբ գնում կատարելու ձևով, կազմակերպել աուդիտորական ծառայությունների ձեռք բերման գործընթացը՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

4. «Մալաթիա-Սեբաստիա» առողջության կենտրոն» փակ բաժնետիրա-կան ընկերության կողմից 2024 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2024 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից Երևանի բյուջե վճարման ենթակա 21939.6 հազ.դրամ (քսանմեկ միլիոն ինը հարյուր երեսունինը հազար վեց հարյուր դրամ) շահութաբաժնի գծով պարտավորության մայր գումարի, ինչպես նաև՝ սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների վճարումից:

5. Վարչական իրավախախտում կատարած անձանց փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Վարչական իրավախախտում կատարած այն անձանց փոխարեն, ում նկատմամբ մինչև 2025 թվականի հոկտեմբերի 23-ը ներառյալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154.1-ին հոդվածի հիմքով կայացվել են վարչական տուգանք նշանակելու մասին վարչական ակտեր և նշված անձինք կամ այն իրավաբանական անձինք, որոնց գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում վարչական իրավախախտում կատարած անձը, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ երկարաձգել են տրամադրված շինարարության թույլտվության ժամկետը կամ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում սահմանված կարգով ստացել են ավարտական ակտը կամ երկարաձգել են շինարարության թույլտվության ժամկետը (բացառությամբ Երևան քաղաքի ավագանու կողմից շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառման արտոնությամբ շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման դեպքերի)՝ սույն կետով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար վարչական ակտով նախատեսված չվճարված տուգանքի գումարի կամ դրա չվճարված մասի չափով համայնքի բյուջեից կատարել վճարում:

6. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 266-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 267-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետի 11-րդ, 12-րդ և 12.1-ին ենթակետերում «ենթակայությամբ գործող» բառերը փոխարինել «ենթակայությամբ» բառերով.

2) 1-ին կետի 11-րդ ենթակետի «բ» պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.

3) 1-ին կետի 11-րդ ենթակետից հետո լրացնել նոր 11.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1) Երևան քաղաքի վարչական տարածքում ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների համար՝ Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված՝ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.».

4) 1-ին կետի 13.1-ին ենթակետից հետո լրացնել նոր 13.2-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«13.2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 10 և ավելի տարի առաջ շինարարական աշխատանքները մեկնարկած /փաստը հաստատվում է Դիմումատուի կողմից ներկայացված փորձագիտական եզրակացությամբ/ և տրամադրված շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետները սպառված, Երևան քաղաքի վարչական տարածքում 10 և ավելի բնակարաններից բաղկացած բազմաբնակարան շենքերի համար՝ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.»:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 266-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 2-րդ կետում «Երևան համայնքի ենթակայությամբ գործող պետական և համայնքային ուսումնական հաստատությունների, Երևանի վարչական տարածքում պետական ենթակայությամբ գործող սոցիալական պաշտպանության

կազմակերպությունների կառուցման և վերակառուցման համար՝» բառերը փոխարինել «Երևան քաղաքի վարչական տարածքում ուսումնական հաստատությունների, Երևան քաղաքի վարչական տարածքում պետական ենթակայությամբ սոցիալական պաշտպանության կազմակերպությունների շենքերի և շինությունների համար՝» բառերով:

2) 7-րդ կետից հետո լրացնել նոր 7.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական տուրքի չափի 85 տոկոսի չափով (այդ թվում՝ նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերի), եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) սույն որոշման 6-րդ կետով նախատեսված արտոնության կիրառմամբ թույլտվություն չի ստացել, Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ և շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ դիմումատուի (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարի) նկատմամբ առկա չէ քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանող Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ սահմանված նորմերի խախտման փաստի առթիվ 2025 թվականի ընթացքում կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշում: Ընդ որում, սույն կետում նշված արտոնության կիրառման արդյունքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար հաշվարկված տեղական տուրքի գումարի չափը 400.000.000 (չորս հարյուր միլիոն) դրամը գերազանցելու դեպքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական տուրքի տարեկան առավելագույն դրույքաչափը սահմանելով 400.000.000 (չորս հարյուր միլիոն) դրամ.»:

3) 10.1-ին կետից հետո լրացնել նոր 10.2-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական

փաստաթղթերի հիման վրա իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում փլուզումների հետևանքով լրացուցիչ շինարարական աշխատանքների անհրաժեշտությամբ պայմանավորված շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգվում է փլուզումների հետևանքների վերացման և վերականգնման համար անհրաժեշտ՝ համապատասխան փորձագիտական եզրակացությամբ նախատեսված ժամկետով և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:»:

7. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 632-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Երևանի քաղաքապետին կամ վարչական շրջանի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային եղանակով դիմում՝ www.dimum.yerevan.am առցանց հարթակի միջոցով, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը.

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.

4) դիմումատուի Երևան համայնքի հանդեպ պարտավորությունների բացակայության վերաբերյալ Երևանի վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի պատճենը.

5) օբյեկտի ճակատային մասի գունավոր լուսանկարը:»:

2) Ձև N 2-ը ճանաչել ուժը կորցրած:

8. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի և արտաքին գովազդի միջոցի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» N 37-Ն որոշման N 1 հավելվածի 143-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) փոքր կամ միջին չափի վահանակների վրա,

4) փոքր կամ միջին չափի վահանակների չափերին համապատասխանող էլեկտրոնային էկրանների միջոցով».

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո տրամադրվող թույլտվությունների վրա:

9. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը, ընդհանուր՝ 21.974.565,20 (քսանմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր վաթսունհինգ դրամ քսան լումա) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Երևանի ենթակայության մարզադպրոցներին՝ համաձայն հավելվածի:

10. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 54-67-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

11. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.06.2009թ. հ.2269090 վկայական) Երևանի Սայաթ-Նովա պողոտայի հ.21ա շենքի հ.50 հասցեում գտնվող 221.8քմ մակերեսով ոչ բնակելի տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի նոյեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

12. Որպես նվիրաբերություն հողամաս տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան, Շենգավիթ վարչական շրջանի Ն. Չարբախ 3-րդ փողոց հ. 31/5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 152.55քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08092025-01-0090 վկայական/ նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ Ներքին Չարբախ 3-րդ փողոց հ.31/13 հասցեում նախատեսվող Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի ստորգետնյա ավտոկայանատեղի մուտք կազմակերպելու նպատակով:

13. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 3-րդ նրբանցք հ.17/2 հասցեում լոգիստիկ պահեստային կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԱՐՊԱՆԻՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 3-րդ նրբանցք հ. 17/2 հասցեում լոգիստիկ պահեստային կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց հ.10/18 հասցեում պահեստային շինությունների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1.«ՆԱՋԱՐՅԱՆ ՔՈՒԼԻՆԳ ՍԻՍԹԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց հ.10/18 հասցեում պահեստային շինությունների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

15. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ.28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՅԱՌԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ

սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

16. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսակովի պողոտա h.31 հասցեում առևտրի կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսակովի պողոտա h. 31 հասցեում առևտրի կենտրոնի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

17. Հակոբ Հակոբյանի հեղինակած «Կնոջ ֆիգուր» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն Երևանի Հ. Թումանյանի անվան այգում քանդակագործ Հակոբ Հակոբյանի հեղինակած «Որս» քանդակի հարևանությամբ «Կնոջ ֆիգուր» քանդակի տեղադրման և քանդակախումբ ստեղծելու առաջարկությանը:

18. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ամիրյան փողոցի մայթերի վերանորոգման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ամիրյան փողոցի մայթերի վերանորոգման աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

19. Երևան քաղաքում Ալեքսանդր Աճեմյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 5-րդ փողոցն(սկսում է Սիլիկյան 8-րդ փողոցից հասնում մինչև Սիլիկյան 13-րդ փողոց) անվանակոչել ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, նշանավոր հայ կոմպոզիտոր Ալեքսանդր Աճեմյանի անվամբ՝ «Ալեքսանդր Աճեմյան փողոց»:

20. Երևան քաղաքում Արամ Սաթունցի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան 6-րդ փողոցն (սկսում է Սիլիկյան 8-րդ փողոցից հասնում Սիլիկյան 11-րդ փողոց) անվանակոչել նշանավոր հայ կոմպոզիտոր Արամ Սաթունցի անվամբ՝ «Արամ Սաթունցի փողոց»:

21. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Որպես նվիրատվություն ընդունել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 20, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2025 թվականի հոկտեմբերի 23-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

22. Երևան քաղաքում Քըրք Քըրքորյանի անվամբ փողոց անվանափոխելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքում Քըրք Քըրքորյանի անվամբ փողոց անվանափոխելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Պեդրո Զարոկյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Սեդա Տեր-Մինասյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Սուսաննա Մելիքյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 6 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Սամվել Հակոբյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

3. Հայկ Գրիգորյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

4. Սուսաննա Մելիքյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

5. Աննա Ավետիսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

6. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը, «Հանրապետություն» խմբակցության անունից՝ Լինա Ղշյանը, «Մայր Հայաստան» խմբակցության անունից՝ Մանուկ Սուքիասյանը, «Հանրային ձայն» խմբակցության անունից՝ Արտակ Գալստյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների Լենիգրադյան փողոցը (սկսվում է Հրազդանի մեծ կամրջից, հասնում Սեբաստիայի և Գ. Հասրաթյան փողոցների խաչմերուկ) անվանափոխել բարերար Քըրք Քըրքորյանի անվամբ՝ «Քըրք Քըրքորյան փողոց»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 18

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

23. Ավետիք (Ավիկ) Վիգենի Իսահակյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Ավետիք (Ավիկ) Վիգենի Իսահակյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 5 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Արշակ Սարգսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Նատալյա Սինորյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
4. Մարատ Թոխյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
5. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը, իսկ «Հանրապետություն» խմբակցության անունից՝ Հայկ Սահակյանը:

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 12.18-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2807-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ավետիք (Ավիկ) Վիգենի Իսահակյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

24. Մարկ Վլադիմիրի Գրիգորյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Մարկ Վլադիմիրի Գրիգորյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1.Մեսրոպ Մանուկյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2. Սեդա Տեր-Մինասյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը և քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 5 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Միքայել Խաչատրյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

3. Սամվել Հարոյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության քարտուղար
4. Քրիստինե Վարդանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
5. Արտակ Գալստյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության անդամ

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անսւնից՝ Արմեն Գալջյանը և «Հանրապետություն» խմբակցության անունից՝ Անի Խաչատրյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2807-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի հասարակական և մշակութային կյանքում ներդրած նշանակալի ավանդի համար լրագրող, մանկավարժ, հասարակական և մշակութային գործիչ Մարկ Վլադիմիրի Գրիգորյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 11

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

25. Տարոն Արտավազդի Մուրադյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Տարոն Արտավազդի Մուրադյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» կոչում շնորհելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար
2. Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան-Երևանի ավգաանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2807-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար հայ նկարիչ Տարոն Արտավազդի Մուրադյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

26. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Իոսիֆ Կուբատյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
6. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
7. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
8. Սամվել Հակոբյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը և աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 9 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Պեդրո Զարոկյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Լուսինե Սարգսյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
4. Սամվել Հակոբյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

6. Իոսիֆ Կուբատյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
7. Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

8. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

9. Լևոն Լևոնյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից՝ Արմեն Գալջյանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Թուլատրել Երևանի քաղաքապետին՝ հաստատված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումներ իրականացնել հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 10 տոկոսի սահմաններում:»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 12, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

27. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Միքայել Խաչատրյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

2. Արման Բաբաջանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

3. Արմեն Գալջյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար

4. Նելլի Ղարդյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Սամվել Հակոբյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Նելլի Ղարդյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ
3. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Ալբերտ Մովսեսյան – Երևանի ավագանու անդամ
5. Լինա Ղշյան- Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ
6. Արևիկ Բլեջյանց – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
7. Մանուկ Սուքիասյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
8. Անի Խաչատրյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 18, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 0

Որոշումը չընդունվեց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը